ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
բաժանորդագրություն

ք.Երևան
«25» 12. 2015թ.

ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայություն (այսուհետ Պատվիրատու) ի դեմս ՀՀ Գլխավոր հարկադիր կատարող՝ Մ. Պողոսյանի մի կողմից և «Բլից-Մեդիա» ՍՊԸ (այսուհետ Մատակարար) ի դեմս տնօրեն Ա.Դավթյանի մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1 Պատվիրատուն պատվիրում է, իսկ Մատակարարը պարտավորվում է սույն պայմանագրի գործողության ժամկետում մատակարարել թերթերի և ամսագրերի փաթեթները: Պայմանագրի գումարը կազմում է **294.000** դրամ:

2.ՄԱՏԱԿԱՐԱՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Մատակարարը պարտավորվում է և երաշխավորում թերթերի և ամսագրերի ժամանակին և պայմանավորված անվանացանկով ապահովումը Պատվիրատուին, կամ նրա լիազորված ներկայացուցչին նախօրոք պայմանավորված հասցեում :
2.2 Թերթերի փաթեթում հայտնաբերված թերությունները առաջին իսկ ահազանգի դեպքում Մատակարարը շտկում է լրացուցիչ մատակարարումով :

3.ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Պատվիրատուն պատվիրվող թերթերի և ամսագրերի ցանկը, ինչպես նաև պահանջվող քանակը փոփոխելու դեպքում Մատակարարին տեղեկացնում է նախապես 1 (մեկ) ամիս առաջ :
3.2 Պատվիրատուի կողմից պատվիրված պարբերականների ցանկը կցվում է պայմանագրին՝ հավելված N1:
3.3 Կից ներկայացվող անվանացանկը համարվում է պայմանագրի անխախտելի մասը:
3.4 Պատվիրատուի կողմից վճարումը կատարվում է երկուստեք հաստատված սակագներով համաձայն հավելված N1-ի, փոխանցման կարգով, նախօրոգ պատվիրված թերթերի և ամսագրերի արժեքի չափով որպես կանխավճար:

4.ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1Կողմերը չեն կրում պատասխանատվություն, եթե սույն պայմանագրի դրույթները խախտվել են ֆորս-մաժորային հանգամանքների առկայությամբ:
4.2Կողմերը իրավունք ունեն սույն պայմանագիրը լուծարել, նախօրոք մեկ ամիս առաջ տեղյակ պահելով մյուս կողմին.

5.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԼՈՒԾԱՐՄԱՆ ԵՎ ՎԵՃԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1 Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման ու կնքման պահից և գործում է հունվարի 1-ից 2016թ մինչև դեկտեմբերի 31-ը 2016թ.

5.2. Մատակարարի կողմից պարտավորությունների շարունակական անբավարար կամ թերի կատարման դեպքում Պատվիրատուն իրավունք ունի լուծել սույն պայմանագիրը և ետ պահանջել գումարը:

5.3. Պայմանագրի խզման դեպքում Մատակարարը պարտավուում է ետ վճարել ընդհանուր գումարի այն մասը, որի դիմաց ծառայություն չի իրականացվել:

5.4 Պայմանագրի գործունեության ընթացքում կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են հնարավորինս բանակցությունների միջոցով, որի անարդյունավետության դեպքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.5 Կողմերի համաձայնությամբ սույն պայմանները կարող են փոփոխվել լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով:

5.6 Սույն պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

6.ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ՄԱՏԱԿԱՐԱՐ
ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայություն	«Բլից-Մեդիա» ՍՊԸ
ՀՀ, Երևան, Հալաբյան 41ա	ք.Երևան, Պուշկինի 15
հեռ.	հեռ. (37410)525301
ՀՎՀՀ 01223338	ՀՎՀՀ 02554494
Հ/Հ 900013288023	Հ/Հ 20500-2204274-1001
Թիվ 1.գանձապետարան	«Ինեկոբանկ»
ՀՀ Գլխավոր հարկադիր կատարող	Տնօրեն
Ա. Պողոսյան	Ա.Դավթյան
_____	_____

Հավելված N1

ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայություն առաջարկվող պարբերականների ցուցակը
(2016թ)

ԱՆՎԱՆՈՒՄ	Քանակ	Գին	Ընդ.գումար
Հայաստանի Հանրապետություն	264	100	26400
Հրապարակ	264	100	26400
Ժողովուրդ	264	100	26400
Հայկական ժամանակ	264	200	52800
Ժամանակ	264	100	26400
Առավոտ	264	200	52800
168 ժամ	156	150	23400
Իրավունք	60	100	6000
Գոլոս Արմենիի	156	150	23400
Cosmopoliten	12	1000	12000
News mag	12	1500	18000
Ընդամենը			294000

«ԲԼԻՑ-ՄԵԴԻԱ» ՍՊԸ

Տնօրեն _____ Ա .Դավթյան

ՀՀ Գլխավոր հարկադիր կատարող

_____ Մ. Պողոսյան